

ժողովը զբաղեցրեց Կրօնական, Ընկերային, Բարոյական ու Գաղթականաց հարցերով:

Ուր. 26 Յունիսին, ԱԵԽ-ի Հաւատքի Կարգ Յանձնախումբը միօրեայ Սեմինար մը կազմակերպած էր, ուր գլխաւոր բանախօսն էր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Հաւատքի Կարգ Յանձնախումբի Ատենապետ, Վեր. Տոմբ. Կունթըր Կասմըն: Ան խօսեցաւ "Եկեղեցւոյ միութիւնը" նիւթին շուրջ:

Առաջնորդ Ս. Հայրը ներկայ եղաւ ու ներկայացուց Ուղղափառ Եկեղեցիներու եւ յատկապէս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ըմբռնումը Հաւատքի Կարգ հարցերու շուրջ:

Ս. Հայրը ներկայ եղաւ ու ներկայացուց Ուղղափառ Եկեղեցիներու եւ յատկապէս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ըմբռնումը Հաւատքի Կարգ հարցերու շուրջ:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նրուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, իր Միաբանակից եղբայրներուն հաղորդած է հետեւեալ տեղեկութիւնը, ժընէվի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով եւ հանգուցեալ Նիշէ Պատրիարք Տէրտէրեանի ստորագրութեամբ բացուած հաշիւի մը մասին:

Միաբանակից եղբայրներուն,

Անցնող տարիներու ընթացքին հետամուտ եղանք Ջուրջերիոյ ժընէվի քաղաքի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով բացուած հաշիւները ստուգելու, զանոնք Պատրիարքարանի անունին փոխանցելու համար: Սակայն դրամատան պատասխանատուները մերժեցին փոխանցումը կատարել, առարկելով որ իրենց դրամատան մէջ բացուած հաշիւը, նախորդ Պատրիարք Նիշէ Տէրտէրեանի ստորագրութեամբ, անձնական եւ անհատական հաշիւ է, եւ դրամատան ներքին օրէնքներուն համաձայն չեն կրնար որեւէ տեղեկութիւն տալ կամ ուրիշ անունի փոխանցել:

Մենք պնդեցինք որ Պատրիարքարանի անունով եւ Նիշէ Տէրտէրեան Պատրիարքի ստորագրութեամբ բացուած հաշիւը անձնական չէ, եւ մենք նոյն հաշիւը կը պահանջենք շարունակել եւ յաջորդ Պատրիարքին անունով արձանագրել:

Սուրբ Էջմիածնէն մեր վերադարձին, 1992 Մայիս 21-24, ժընէվի այցելեցինք գլխաւորաբար այս նպատակով: Ըստ նախապէս եղած կարգադրութեանց եւ ժամադրութեանց, ժընէվի մէջ մեզի ընկերացաւ Նրուսաղէմէն Պատրիարքարանի փաստաբանը: Օրինական փաստաթուղթերը եւ հաստատագիրները ներկայացուցան դրամատան վարիչներուն որոնք ընդունեցին փոխանցման գործողութիւնները կատարել, եւ մեր ներկայութեան եւ ստորագրութեամբ այդ հաշիւը փոխանցուցաւ Պատրիարքարանի եւ Պատրիարքին անունին:

Այդ հաշիւին մէջ չնչին գումար մը մնացած է, երեսուն մէկ Ամերիկեան Տոլար: 1989 տարւոյ վերջին ամիսներուն, տասնեակ հազարներով "Cash" գումարներ գանձուած են, չենք գիտեր որո՞ւ ստորագրութեամբ եւ ի՞նչ նպատակներու համար: Ձեռքի տուինք անունը այն անձին որուն լիազօրութիւն տրուած էր նոյն հաշիւէն գանձումներ կատարելու:

Այս հարցին կապակցութեամբ ապագային կը տեղեկագրենք երբ յաւելեալ տեղեկութիւններ կարելի դառնայ ձեռք բերել: